

# ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ

## ԳՐԻԳՈՐ ԹԱՆԱՆՅԱՆ

«Յուրաքանչյուր հասարակություն, որտեղ ապահովված չէ իրավունքների երաշխավորումը, և հաստատված չէ իշխանությունների բաժանումը, ընդհանրապես չունի Սահմանադրություն»<sup>1</sup> : Սահմանադրությունը պետության օրենսդրության իրավական հիմքն է, ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն<sup>2</sup> : Այն սահմանում է պետության հիմնական մարմինների (օրենսդիր, գործադիր և դատական) ստեղծման եղանակը, նրանց փոխհարաբերությունները, լիազորությունների շրջանակը, անհատի իրավունքներն ու պարտականությունները, իշխանության մարմինների կազմավորման, գործունեության կարգը, ընտրական համակարգի սկզբունքները, պետական գործունեության մեջ քաղաքացիների մասնակցության կարգը, այսինքն՝ տվյալ երկրի քաղաքական, իրավական և տնտեսական հիմունքները և արտացոլում է սոցիալական տարբեր խավերի ու քաղաքական ուժերի հարաբերակցությունն այն ընդունելու պահին: Ըստ ձևի՝ սահմանադրությունը լինում է գրված, որը մեկ միասնական ակտ է կամ մի քանի սահմանադրական օրենքների ամբողջություն, և չգրված՝ բաղկացած սահմանադրական մի շարք ակտերից, սահմանադրական սովորույթներից և նախադեպերից, ինչպես, օրինակ, Մեծ Բրիտանիայում: Սահմանադրություն ընդունելու իրավունքը վերապահվում է Սահմանադիր ժողովին կամ ընտրական զանգվածին՝ համաժողովրդական հարցման միջոցով, կամ պետության գլխին: Սահմանադրության փոփոխման և հաստատման կարգը նույնպես նախատեսվում է սահմանադրությամբ: Եվրոպական լեզուներում «constitution» նշանակում է կազմություն, կազմակերպում, մարմինների կազմվածք, որն իսկապես լիովին համապատասխանում է սահմանադրության վերոհիշյալ բնութագրմանը: Այս առումով, սակայն, հայերեն անվանումը դուրս է ընդհանուր շարքից: Սահմանադրություն նշանակում է սահման դնել կամ դրված սահման: Եթե առաջին

<sup>1</sup> Մարդու և քաղաքացու իրավունքների ֆրանսիական հռչակագիր, 26 օգոստոսի 1789, հոդվ. 16:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, Երևան, 2012, հոդվ. 6, էջ 9:

ըմբռնման պարագայում շեշտը դրվում է հիմնական սկզբունքների տեսական՝ իրավական ձևակերպման, ապա երկրորդի դեպքում՝ այդ փաստաթղթից օգտվելու կիրառության վրա, որն անկասկած իմաստային առավելություն ունի առաջինի նկատմամբ: Ըստ Հոբսի հասարակական դաշինքի հայտնի տեսության՝ պետությունը քաղաքացիական հաշտության ու համաձայնության արդյունք է, երբ հասարակության յուրաքանչյուր անդամ ինքնակամ սահմանափակում է ամեն ինչի նկատմամբ ունեցած ազատությունը և իր իրավունքի մի մասը փոխանցում ուրիշներին՝ պետությանը, որն իրագործվում է դաշինքի միջոցով: Դրա հետևանքով ստեղծված պետությունը կոչված է բոլորի համար ապահովելու խաղաղություն, անվտանգություն և համընդհանուր բարօրություն<sup>3</sup>: Բայց և այնպես, «Ամենուր պետական ապարատին ներհատուկ է հասարակ մարդկանցից, ժողովրդից ու հասարակությունից օտարվելու, դեպի բյուրոկրատիզմը և կորպորատիզմը հակվելու, իր դիրքերը չարաշահելու, գործող օրենսդրությունն անտեսելու, համապետական գործերն իրենց սեփական ապարատային գործերով և շահերով փոխարինելու միտումը»<sup>4</sup>: Այսինքն՝ պետությունը թեև ի սկզբանե ստեղծվում է որպես հանրային հաստատություն, քաղաքականապես հակադիր ուժերի հաշտեցման մարմին է, սակայն, որպես բացարձակ իշխանություն, հզորանալով այլափոխվում է, կորցնում հաշտեցման գործառույթը. չհանդիպելով հակադեցության՝ իշխանությունը սկսում է այլասերվել, դառնալ ամենակուլ ուժ: Ուստի հարկ է սահմանափակել պետության ու պաշտոնյաների նկրտումներն իրավունքի ուժով, ինչն էլ, փաստորեն, հենց սահմանադրության բուն էությունն է: Դա էլ արվում է իրավականորեն սահման դնելով՝ սահմանադրությամբ: Իսկ ամենից կարևորը թերևս այն է, որ «Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»<sup>5</sup>: Պետություն դառնալու միակ գրավականը սահմանադրությունն է, այն էլ միայն այն դեպքում, եթե դու ապրում ես դրանում ամրագրված սահմանափակումներով: Սահմանա-

<sup>3</sup> Ст' у Гоббс Т., Левиафан, Соч.: В 2 т., Т.1, Москва, 1965, с.197.

<sup>4</sup> Ներսեսյանց Վ., Իրավունքի և պետության տեսություն, Երևան, 2002, էջ 91:

<sup>5</sup> ՀՀ Սահմանադրություն, հոդվ. 3, էջ 8:

դրությունը պետք է լինի բարձրագույն արժեք ոչ միայն պետության գլխի, այլև ամեն մի պաշտոնյայի, ամեն մի քաղաքացու համար: Սահմանադրության տառին ու ոգուն խիստ հավատարիմ մնալով և դրանցում ամրագրված սահմանափակումներին ենթարկվելով է հնարավոր արժանի լինել ինքնակառավարման, ստեղծել համընդհանուր բարեկեցության արդար, ուժեղ և հզոր պետություն: Այսպիսով, սահմանադրությունը, որպես հասարակության և պետության փոխհամաձայնությունը վավերացնող հիմնարար փաստաթուղթ, առավել գործուն միջոց է հասարակական կյանքում օրինականություն, կարգ ու կանոն ապահովելու համար: «Սահմանադրություն» հասկացությունն ընդհանրապես ոչ միայն խորթ չէ, այլև հարազատ է մեր մշակույթին, քանզի մեր նախնիներն այն օգտագործել են ավելի քան 1500 տարի առաջ՝ «Սահմանադրություն կանոնի Վաչագանայ Աղուանից արքայի»: V դարում Արցախի և Ուտիքի թագավոր Վաչագան Գ Բարեպաշտը, հիմնելով թագավորություն, հաղթահարելու համար տիրող անիշխանությունը և ամրապնդելու թագավորության վարչական հիմքերը, ձեռնամուխ է լինում տերության ներքին կարգ ու կանոնն ապահովող օրենքների մշակմանը: Ժամանակի նշանավոր մտածողների աջակցությամբ՝ նախկին եկեղեցական կանոնների ու պետական կազմակերպության մասին պահպանված մատենագիտական աղբյուրների հիման վրա նրա կազմած «Սահմանադրություն կանոնական»-ը հաստատվել է Աղվենի եկեղեցական ժողովում: Այն բաղկացած էր 21 կանոններից և հիմնականում նպատակ ուներ վերջ տալ հեթանոսական սովորույթներին ու կենցաղավարությանը, հարթել աշխարհականների ու հոգևորականների միջև բազմաթիվ հակառակությունները, այդ հարաբերությունները համապատասխանեցնել Աշտիշատի ժողովի սահմանումներին: Ինչ վերաբերում է խորհրդարանական ավանդույթներին, ապա հայ իրականության մեջ դրանք սաղմնավորվել են դեռևս Հին Հայաստանում: Խորհրդարանի վաղնջական մոդելը՝ Աշխարհածողովը, գումարել է արքան: Դրան մասնակցել են ազնվականներ, հոգևորականներ, շինականներ ու ռամիկներ: Քննարկվել են համապետական նշանակության հարցեր: Իրավագիտական միտքը Հայաստանում իր զարգացումն ստացավ վաղ ֆեոդալիզմի դարաշրջանում: Այդ դարաշրջանի պատմիչներն ու իմաստասերները՝ Ագաթանգեղոս, Եզնիկ Կողբացի, Մովսես Խորենացի, Դավիթ Անհաղթ և ուրիշներ, իրենց երկե-

րում մեկնաբանել են իրավական նորմեր, անդրադարձել իրավունքի, կամքի ազատության, պատժի և հանցագործության հասկացություններին, կառավարման ձևերին և այլն: Այդ շրջանի իրավունքի կարևոր հուշարձան է Հովհաննես Գ Օձնեցու կազմած «Կանոնագիրք Հայոց»-ը: Դարաշրջանի իրավագիտական մտքի բարձր մակարդակը վկայող հուշարձան է հայ մեծ մտածող, խոշորագույն իրավագետ, օրենսդիր և օրինակարգող Մխիթար Գոշի «Գիրք դատաստանին», որը շրջանառության մեջ է դրել մի շարք առաջադիմական սկզբունքներ՝ պետականություն, համապետական օրենքների նշանակություն, օրինականության պահպանում, կամքի ազատություն, պատժի կիրառման նպատակ և այլն, որոնք այսօր էլ շարունակում են մնալ խիստ արդիական<sup>6</sup>: Պետության և իրավունքի հարցերը տեղ են գտել Գրիգոր Մագիստրոսի, Գրիգոր Տաթևացու, Հովհաննես Դրասխանակերտցու, Արիստակես Լաստիվերտցու, Հովհաննես Սարկավագի, Կիրակոս Գանձակեցու, Ներսես Շնորհալու, Դավիթ Ալավկա Որդու, Սմբատ Սպարապետի և այլոց աշխատություններում: Վերջիններիս մշակած գաղափարների, Հայ եկեղեցական կանոնագրքերի, ինչպես նաև վաղնջական ժամանակներում սաղմնավորված սահմանադրական ու խորհրդարանական ավանդույթների յուրովի ընդհանրացումը հանդիսացավ Հակոբ և Շահամիր Շահամիրյանների «Որոգայթ փառացը», որը ոչ միայն հայ իրականության մեջ, այլև աշխարհում առաջին սահմանադրական նախագիծն էր՝ կառավարման համակարգը՝ խորհրդարանական (1773թ.): Այն այսօր էլ արժեքավոր և ընդօրինակելի է սկզբունքների էության և հարցադրումների ընդգրկման առումով: «Անդրադառնալով ժողովրդի իշխանության, իրավունքի գերակայության, ներկայացուցչական ժողովրդավարության, իշխանությունների տարանջատման, սոցիալական պաշտպանվածության, սահմանադրական արդարադատության և բազմաթիվ այլ սահմանադրական սկզբունքների, առաջին անգամ հայ իրականության մեջ ներկայացվում է պետական (սահմանադրական) իրավունքի նորմերի ամբողջական ու կանոնակարգված համակարգը՝ ոչ միայն ընդհանրացնելով հայ և համաշխարհային հասարակական մտքի նվաճումները, այլև պետական նոր մտածողության սկիզբ դնելով դարձավ միջազգային սահմանադրա-

<sup>6</sup> Տե՛ս Թանանյան Գ., Մխիթար Գոշի իրավունքի փիլիսոփայությունը .-Պատմաբանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), Երևան, 2012, հ. 1, էջ 38:

կան զարգացումների անկյունաքարային արժեքներից մեկը»<sup>7</sup>: Իսկ ներածական մասում ամփոփված փիլիսոփայությունը մարդկանց համակեցության միակ արժանավոր եղանակի տեսական հիմնավորումն ու օրինականության փառաբանումն է. «Ձեզ համար ընտրեք բարի օրենքներ՝ ապրելով ու կախման մեջ մնալով ձեր օրենքներից, քանզի ոչ ոք իրավունք չպիտի ունենա իշխելու ձեզ, բացի ձեր օրենքներից»<sup>8</sup>: «Իրավունքի և արդարության ծառի պտղաբերումները» միայն կարող են «արդար կառավարությունների» բարեպաշտ գործելակերպի հիմք դառնալ՝ արդարության ու օրինականության մեջ փնտրելով անհատի ու հասարակության երջանկությունը, ելակետ ունենալով «...օրենքով ու արդարությամբ մեր կյանքը վարելու հրամայականը», - սա է «Որոգայթ փառացի» հեղինակների մեծագույն պատգամը<sup>9</sup>: Հայ մշակույթը հարուստ է ոչ միայն աշխարհիկ ու հոգևոր կյանքի կարգավորմանն ուղղված դատաստանագրքերով, այլև եկեղեցական կանոնագրքերով: Հայ առաքելական եկեղեցին իր ժողովներում՝ Աշտիշատի /352թ., 354թ., 435թ./, Շահապիվանի /444թ./, Արտաշատի /449թ./, Դվինի /506թ., 551թ., 645թ., 648թ./, Կարնո /633թ./ և այլն, պարբերաբար քննարկել է ոչ միայն դավանաբանական, ծիսական և ներկազմակերպական կանոնակարգման, այլև ազգային-պետական կյանքի օրինավոր կարգավորման, հասարակության տարբեր խավերի, այդ թվում՝ եկեղեցականների և աշխարհականների միջև հակասությունները մեղմելու, վեճերը լուծելու խնդիրները: Ընդունվել են պարտադիր որոշումներ ու կանոններ, որոնք կիրառվել են ինչպես եկեղեցու, այնպես էլ պետության հովանավորությամբ: Ազգային-հանրային կյանքի կարգավորման հարցերը հայ մտավորականները քննարկել են նաև օտար պետությունների կազմում որպես համայնք գործառելիս: Հայոց սահմանադրական մշակույթին ծանոթանալիս հեշտ է համոզվել, որ պատմության այս կամ այն փուլում, լինի ինքնուրույն պետականության օրոք, թե պետականազուրկ պայմաններում, բուն երևույթը՝ սահմանադրականությունը, որպես մտածելակերպ, արգասիք է հայոց սոցիալ-փիլիսոփայական, իրավաբանական մտքի ընդոճին զարգացման: Կանոնների ձևով դրանք կոչված են

<sup>7</sup> Թանանյան Գ., «Որոգայթ փառաց», ՊԲՀ, Երևան, 2013, հ. 2, էջ 163:

<sup>8</sup> Հ. Շահամիրյան, Շ. Շահամիրյան, Որոգայթ փառաց, Երևան, 2002, էջ 14:

<sup>9</sup> Տե՛ս Թանանյան Գ., «Որոգայթ փառաց», էջ 163:

եղել կառավարելու ներհամայնքային կյանքը, կարգավորել են ինչպես համայնքի անդամների փոխհարաբերությունները, այնպես էլ կապերն այն պետության համապատասխան հաստատությունների հետ, որի կազմում եղել են: Վերջինիս օրինակներից են «Աստրախանի հայոց դատաստանագիրքը» և մեր քննարկման առարկան՝ թուրքահայության «Ազգային սահմանադրություն Հայոցը»: Վերջինս հայ քաղաքական մտքի բացառիկ հուշարձաններից է, որն առաջին հերթին արժևորվում է որպես ազգային ինքնակառավարման կազմակերպման, ամրապնդման և իրականացման իրավական ձև: Ինքնին հասկանալի է, որ սահմանադրությունը՝ որպես պետության հիմնական օրենք, ենթադրում է պետության առկայություն, որից հայությունը գուրկ էր: Այն ամենից առաջ սահմանում-բնութագրում է տվյալ երկրի իրավաքաղաքական և սոցիալ-տնտեսական հիմունքները, պետության տարածքային կազմակերպումը, պետաիրավական ռեժիմը: Նման բան սույն փաստաթղթում, իհարկե, չկա և չէր կարող լինել: Սակայն փորձենք տարբերել իրավական փաստաթուղթը դրա բովանդակությունից, բուն ոգուց՝ սահմանադրությունից: Այս դիրքերից ահա պիտի ընդունենք, որ անգամ անհամապատասխան անվանմամբ, թերակատար գործադրմամբ, այս փաստաթուղթն ինքնին վկայությունն է հայ մշակույթի, մտածելակերպի, հատկապես իրավական-կառավարաբանական մտքի գերազանցության՝ պետականորեն իշխող ազգային տարրերի՝ տվյալ դեպքում թուրքերի հանդեպ: Առերևույթ հայերը, թուրքահպատակ մյուս ազգերի համեմատությամբ (քրդեր, արաբներ, հույներ, ալբանացիներ, բուլղարներ, հրեաներ, չերքեզներ), թե՛ տնտեսապես, թե՛ քաղաքականապես ավելի բարձր դիրքում էին: Բայց և այնպես հայերի կայքն ու կյանքը ապահովված չէին, հայերը մնում էին անբարեհույս տարր, և օսմանյան օրենքներում կային բազմաթիվ խտրականություններ ու ստորացուցիչ այլ պայմաններ: Այնպես որ օրինականության հաստատման և կանոնադրական փաստաթղթի ձևով դրա վավերացման հայոց ձգտման և ընդունման համար առկա էին ոչ միայն արտաքին ու ներքին պատճառներ, այլև որոշակի պատմական, սոցիալ-քաղաքական, իրավաքաղաքական և գաղափարական պայմաններ և նախադրյալներ:

Արտաքին պատճառներից գլխավորն այն էր, որ XIX դարի 30-ական թվականներին Օսմանյան կայսրությունը ճգնաժամի մեջ էր: Ներքին

և արտաքին ծանր կացությունը կառավարող վերնախավին հարկադրեց ձևակերպել ճգնաժամից դուրս գալու և բարեփոխումներ անցկացնելու միջոցներ: Բարենորոգումների նպատակն էր կասեցնել Օսմանյան կայսրության քայքայումը, բարելավել վարչական կառավարման համակարգը, կանխել ճնշվող ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները: Այդ բարենորոգումները, որոնք հայտնի են «թանգիմաթ», (արաբ.՝ վերակառուցում, բարեփոխում) անունով, սկզբնավորվեցին 1839-ին և շարունակվեցին մինչև 1870-ական թվականների սկիզբը: 1839թ. նոյեմբերի 3-ին հրապարակվեց Գլուկհանեի Հաթթը շերիֆը, որով հայտարարվում էր բոլոր հպատակների (անկախ կրոնական և ազգային պատկանելությունից) անձի, պատվի ու գույքի անձեռնմխելիություն, կապալային համակարգի վերացում, զինվորական ծառայության կրճատում, ֆինանսական վարչարարության ու դատական գործերի բարելավում և այլն: Հաթթը շերիֆը իր շատ կողմերով հակասում էր մահմեդական ավանդույթներին և շարիաթին: Եթե քրիստոնյաները ողջունեցին դրա հրապարակումը, ապա մահմեդականներն այն ընդունեցին կատաղի դիմադրությամբ՝ շատ դեպքերում ուղեկցվելով նաև ելույթներով և քրիստոնյաների ջարդերով: Հաթթը շերիֆը գրեթե ոչինչ չփոխեց գոյություն ունեցող դրության մեջ: Այլադավաններին խոստացված հավասարությունը մնաց թղթի վրա: Իլթիզամը (հարկի վարձակալումը) շարունակում էր լայնորեն կիրառվել հարկահավաքման մեջ, այլադավանները շարունակում էին հողահարկ վճարել: Ղրիմի պատերազմի տարիներին (1853-1856) երկրի տնտեսական դրությունը կտրուկ վատթարացավ, նկատելի էին աշխատավորական լայն զանգվածների հետագա աղքատացումը, հարկային եկամուտների կրճատումը, Թուրքիայի ֆինանսական կախվածությունը Անգլիայի և Ֆրանսիայի բանկիրներից և պետական զանձարանի ճգնաժամը: Ուժեղանում էր բնակչության դժգոհությունը տիրող իրավիճակից, իսկ ճնշված ժողովուրդները ոտքի էին ելնում ազգային-ազատագրական պայքարի: Անհրաժեշտություն առաջացավ կենսագործելու 1839 թվականին հռչակված ռեֆորմները: Ուժեղացավ նաև Անգլիայի, Ֆրանսիայի և Ավստրիայի ճնշումը Բարձր Դռան վրա, որոնք նույնպես պահանջում էին բարեփոխումների անցկացում: Սուլթանական կառավարությունը 1856թ. փետրվարի 18-ին հրապարակեց բարեփոխումների մասին նոր հրովարտակ՝ Հաթթը հումայունը, որը կրկնությունն էր

Հաթթը շերիֆի, սակայն լրացուցիչ արտոնություններ էր նախատեսում քրիստոնյա հպատակների համար (հոգևոր խորհուրդներ ընտրելու իրավունք): Միաժամանակ արտոնություններ էին տրամադրվում Թուրքիայում եվրոպական կապիտալին: Վարչական ասպարեզում նախատեսվում էր նահանգական մեջլիսների (խորհուրդների) ռեֆորմ, դրանցում մահմեդական և ոչ մահմեդական համայնքների ներկայացուցիչների ազատ ընտրություն և կարծիքներ արտահայտելու ազատություն: Տնտեսական մարզում պահանջվում էր շուտափույթ միջոցներ գտնել վերացնելու հարկերի ու տուրքերի, հատկապես աշարի գանձման ժամանակ թույլ տրվող չարաշահումները, հնարավորին չափ շուտ անցնելու հարկերի գանձման ուղղակի համակարգի և վերացնելու իլթիզամը: Հաթթը հումայունում մեծ տեղ էր հատկացվում օրենքի առջև ոչ մահմեդականների հավասարության ապահովմանը և ոչ մահմեդական համայնքներին գանազան արտոնություններ ընձեռելուն: Սուլթանի բոլոր հպատակներին, առանց դավանանքի խտրականության, խոստացվում էր իրավունք՝ նշանակվելու պետական ծառայության, ընդունվելու ցանկացած զինվորական կամ քաղաքացիական վարժարան, բոլոր կրոնական համայնքների ներկայացուցիչներին (որոնց նշանակում էր սուլթանը մեկ տարով) վերապահվում էր Արդարադատության բարձրագույն խորհրդի նիստերին մասնակցելու իրավունք, տեղական մեջլիսներին թույլատրվում էր ռեֆորմների նախագծեր ներկայացնել Բարձր Դռանը սուլթանի հավանությամբ: Հաթթը հումայունը նույնպես հանդիպեց մահմեդականների դիմադրությանը: Կայսրության շատ վայրերում բարենորոգումների ծրագիրը նույնիսկ չիրապարակվեց: Թանզիմաթի շրջանակներում 1858 թվականին լույս տեսավ հողային օրենսգիրքը, 1867-ին՝ վիլայեթների մասին կանոնադրությունը, 1869-ին՝ քաղաքացիական օրենսգիրքը և այլն: Թանզիմաթը էական փոփոխություններ չմտցրեց Արևմտյան Հայաստանի հասարակական և տնտեսական ծանր վիճակի մեջ:

Եվ այսպես, ընդհանրացնելով վերոհիշյալը, կարելի է ասել, որ Օսմանյան կայսրությունը XIX դարի կեսերին տնտեսական, քաղաքական, սոցիալական, բարոյահոգեբանական ծանր ճգնաժամի մեջ էր: Պետության ռազմաֆեոդալական բնույթը, կառավարչական վիթխարի ապարատն ու համատարած շահաձախվածությունը, տնտեսության հետամնացություն-



նր, տեղական արտադրանքի ցածր մրցունակությունը, գյուղացիության ծանրագույն հարկային բեռը, ազգամիջյան բախումները, քաղաքացիների անձնական և գույքային անապահով վիճակը, ռուս-թուրքական պատերազմում կրած ծանր պարտությունները, եվրոպական երկրներից ֆինանսական կախվածությունը. սա էր այն իրողությունը, որի պայմաններում հայ համայնքի մտավորական վերնախավը հասավ Սահմանադրության կայացմանը և ձգտում էր գործադրել դրա բարենպաստ ներուժը:

Ներքին պատճառներից էր այն, որ թուրքական կառավարությունը նվաճված ժողովուրդներին դիտարկում էր իբրև սուկ կրոնական համայնքներ, որոնց ազգային գործերը միահեծան տնօրինում էին կրոնապետերը: Այդ պատճառով էլ թեև Կ. Պոլսի հայոց պատրիարքները օժտված էին լայն իշխանությամբ, սակայն հայ համայնքի վերնախավը՝ ամիրաները, մեծավ մասամբ թուրք տերերի կողմը լինելով և օգտագործելով իրենց կապերը Բարձր Դռան և սուլթանական արքունիքի հետ, տնօրինում էին պատրիարքական աթոռն ըստ իրենց հայեցողության: Այսինքն՝ արևմտահայերի կրոնական, կրթական, հասարակական կյանքը տնօրինում էին Կ. Պոլսի հայոց պատրիարքները և հայ ամիրաներն ու սեղանավորները: Արևմտահայ աշխատավոր զանգվածները զրկված էին քաղաքական և քաղաքացիական իրավունքներից: Օգտվելով Թուրքիայում սկիզբ առած վերոհիշյալ «բարեփոխումների» ընձեռնած հնարավորություններից՝ դրա սահմաններում 1844 թվականին Մատթեոս պատրիարքի արտոնագրով ստեղծվեց պոլսահայերի ներքին գործերը կարգավորող մարմին՝ Ազգային ժողով: Այն կազմված էր 30 անդամից՝ 16 ամիրաներից և 14 էսնաֆներից (համքարներից): Ազգային ժողովը հսկում էր պատրիարքարանի միջոցների ծախսերը, արտոնում դպրոցների բացումը, կարգավորում հարկահավաքը մայրաքաղաքի հայ բնակչությունից: Ազգային ժողովը դադարեց գործել 1847 թվականին, երբ Կ. Պոլսի հայ համայնքի ներկայացուցիչներից կազմավորվեցին հոգևոր (տնօրինում էր կրոնական գործերը, կազմված էր 14 հոգևորականից) և գերագույն (տնօրինում էր կրթության, մամուլի ու մշակույթի գործը, կազմված էր 20 աշխարհականից) մշտական գործող ժողովները, որոնց նպատակն էր Կ. Պոլսի պատրիարքի և հայ ամիրաների գործունեության

սահմանափակումը, համայնքի մշակութային և հոգևոր գործերի տնօրինումը: Կ. Պոլսի հայ արհեստավորներն այդպիսով առաջին անգամ իրավունք ձեռք բերեցին մասնակցելու ազգային գործերի տնօրինմանը: Ժողովների նախագահը Կ.Պոլսի հայոց պատրիարքն էր: 1860 թվականին Ազգային սահմանադրության ընդունմամբ այդ ժողովները վերակազմվեցին որպես տարբեր մարմիններ: Ազգային սահմանադրությունը Ֆրանսիա ուսումնառության մեկնած մի խումբ հայ երիտասարդների քսանամյա ջանքերի արդյունք էր, որոնք մասնակցել էին 1848 թվականի Ֆրանսիական հեղափոխությանն ու ներշնչվել նրա գաղափարներով: Վերադառնալով Կ.Պոլիս՝ տեղի դեմոկրատական ուժերի հետ ծրագրեցին առանց արյունահեղության ազգի ներքին գործերի կառավարման ղեկը վերցնել իրենց ձեռքը: 1853 թվականին Ազգային հոգևոր և գերագույն ժողովների համաձայնությամբ կազմվեց «Ուսումնական խորհուրդ», որի անդամներ Ն. Ռուսինյանը, Գ. Օտյանը, Ն. Պալյանը, Ս. Վիչենյանը (Սերվիչեն), Կ. Ություճյանը, Մկրտիչ Աղաթոնը և Գրիգոր Աղաթոնը 1857 թվականին մշակեցին ազգային, մշակութային և հասարակական կյանքին վերաբերող կանոնադրություն: Այն կազմվեց բելգիական սահմանադրության սկզբունքներով և կրում էր ֆրանսիական հեղափոխության ազդեցությունը: Կանոնադրության նախագծի քննարկումն ընթացավ առաջադիմականների ու կղերա-ամիրականների սուր պայքարի մթնոլորտում: Քանիցս մերժվելուց ու փոփոխվելուց հետո, ի վերջո, 1860 թ. մայիսի 24-ին Ազգային ժողովն ընդունեց ու հաստատեց կանոնադրությունը, որը Ն. Ռուսինյանի առաջարկով անվանվեց «Ազգային սահմանադրություն»: Կառավարությունը, ընդառաջելով կղերա-ամիրականներին, ձգձգում էր Ազգային սահմանադրության հաստատումը: 1861 թ. հուլիսին արհեստավորներն ընդվզեցին պատրիարքի դեմ: 1862 թ. օգոստոսի 2-ին ցույցեր տեղի ունեցան: Երկնչելով ժողովրդական շարժումների ուժեղացումից՝ կառավարությունը ամիրաների սադրանքով և ազատականների համաձայնությամբ կրճատեց ու վնասագերծեց Ազգային սահմանադրությունը և նոր միայն վավերացնելով 1863 թ. մարտի 17-ին՝ տվեց գործելու իրավունք: Բարձր դուռը համոզված էր, որ դրանով հայերին կմեկուսացնի իրենց ազգային-կրոնական շրջանակներում՝ հեռու պահելով համապետական քաղաքական խնդիրներից, իսկ

Եվրոպայում կբարձրացնի Թուրքիայի վարկը՝ որպես իրավական-  
ժողովրդավարական, եվրոպականացող երկիր: Սահմանադրության  
բնագիրը հայերեն էր, սակայն պաշտոնական էր համարվում վավերաց-  
ված թուրքերեն տեքստը: Ազգային սահմանադրությունն ուներ 150  
հոդված, սակայն հաստատված էր 99-ը: Կրճատվել էին համայնքի հա-  
մար խիստ կարևոր 51 հոդվածները: Ազգային ընդհանուր ժողովի ան-  
դամների թիվը 400-ից իջեցվել էր 140-ի, հիմնականում՝ ի հաշիվ գավառի  
ներկայացուցիչների: Եվ այսպես, Սահմանադրության տիտղոսաթերթին  
գրված է հայերեն՝ «Ազգային Սահմանադրություն Հայոց» և թուրքերեն՝  
«Նիզամնամեի Միլլեթի Էրմենիան», 1863 թվական, իսկ հաջորդ էջին՝ «Ի  
Հայրապետութեան Տ.Տ.Սատթեոսի Ա. Կաթողիկոսի Ամենայն Հայոց» և  
«Ի տեղապահութեան Պատրիարքական Աթոռոյ Կոստանդնուպօլսոյ Տ.  
Ստեփաննոսի արքեպիկոպոսի Նիկոմիդիոյ»: Հիշեցվում է նաև, որ  
«Պատրիարքական Տեղապահի կնքով չը վաւերացեալ օրինակաց  
ճշգրտութիւնը երաշխաւորյալ չէ՛»: Սահմանադրության սկզբում տրվում  
է ցանկը, ըստ որի այն բաղկացած է առաջաբանից, հիմնական սկզբուն-  
քից և հինգ գլուխներից: Բայց մինչ այդ բերվում են մի շարք գրություն-  
ների օրինակներ: Սահմանադրությանը նախ կցվում է 1862թ. փետրվարի  
14-ին Պատրիարքական տեղապահին ուղղված Բարձրագույն Դռան Ար-  
տաքին գործերի տեսչության թիվ 191 նամակը: Վերջինս, հիմք է  
ընդունում բարեկարգության վերաբերյալ Կայսերական հրովարտակը,  
որը «կը պահանջէ, որ ամեն Հասարակութիւն իր վայելած առանձնաշնո-  
րութիւններն ու արտօնութիւնները որոշեալ պայմանաժամի մէջ ի քննին  
առնելով, ժամանակին բերմանցը և քաղաքակրթութեան արդեանցն ու  
գիտութեանց պահանջած բարեկարգութիւնները խորհրդածութեամբ  
որոշէ, ու Բարձրագոյն Դրան ներկայացընէ, եւ Հոգևորական Գլխոց  
շնորհուած իշխանութիւնն ու ձեռնհասութիւնը՝ իւրաքանչիւր  
Հասարակութեան ապահովուած վիճակին ու նոր դիրքին հետ  
համաձայնութեան մէջ դրուի»<sup>10</sup>: Վերոհիշյալ հանգամանքներից ելնելով՝  
նամակում առաջարկվում է Սարգիս Պատրիարքի օրոք կազմված  
Ընդհանուր ժողովի եկեղեցական անդամների ու թաղական երեսփոխան-  
ների քվեարկությամբ Հայոց Ազգի պատվավոր անձնավորություններից

<sup>10</sup> Ազգային Սահմանադրություն Հայոց, 1863, էջ 1:

ընտրել յոթնոգանոց հանձնաժողով: Այդ հանձնաժողովի անդամներ ընտրվեցին Մկրտիչ Աղաթոնյանը, Ստեփան Ասլանյանը, Մանուկ Մանուկյանը, Մինաս Մինասյանը, Նահապետ Ռուսինյանը, Հովհաննես Միրունյանը և Գրիգոր Օտյանը: Ազգային հանձնաժողովի ընտրված կազմը խնդրվում է ներկայացնել Բարձրագույն Դռան հանձնաժողովին (անդամներ՝ Գևորգ Երեմյան, Սերովբե Վիչենյան, Հակոբ Մուլապահեճյան, Հովհաննես Եղիազարյան, Հովհաննես Տատեյան, Գրիգոր Աղաթոն, Հակոբիկ Նորատունկյան և Գասպար Կյումուշճյան), որի հետ համատեղ պետք է նախապատրաստվեր Սահմանադրության նախագիծ <sup>11</sup> : Առաջաբանում նշվում է, որ Օսմանյան տերության մեջ ոչ մահմեդական հպատակների համար շնորհված արտոնությունները հավասար են բոլորի համար, բայց դրանց գործադրության եղանակը յուրաքանչյուր ազգի համար բխում է նրա սովորույթներից և տնօրինվում է մասնավոր կերպով: Այնուհետև նկարագրվում են այդ մասնավոր տնօրինման առկա իրավիճակը, դրա լիարժեք իրագործմանը խոչընդոտող պատճառները, և որպես հետևություն հիմնավորվում է առաջարկվող սահմանադրության ընդունումը: Հեղինակների կարծիքով՝ այն կարող է նպաստել գոյություն ունեցող խոչընդոտների հաղթահարմանը և վերոհիշյալ մասնավոր տնօրինման իրավունքի լիարժեք ու ամբողջական իրագործմանը:

Սահմանադրության «Հինական սկզբունքներ» բաժնում սահմանվում են հինգ հիմնական սկզբունքներ: Ըստ Ա գլխի հիմնական սկզբունքի՝ ազգի յուրաքանչյուր անհատ ազգի նկատմամբ ունի պարտավորություններ: Ազգն էլ իր հերթին պարտավորություններ ունի ազգի ամեն մի անհատի նկատմամբ: Ուստի ազգն ու անհատը փոխադարձ պարտավորությամբ կապված են միմյանց հետ այնպես, որ մեկի պարտավորությունը մյուսի իրավունքն է: Բ գլխի սկզբունքի համաձայն՝ ազգի ներկայացուցիչների պարտականությունն է ազգային պահանջվող ծախսերին հոժարակամ մասնակից լինելն իր կարողությունների չափով: Ազգի ներկայացուցիչների այս պարտավորությունն ազգի իրավունքն է: Գ գլուխն ամրագրում է, որ ազգի պարտականությունն է ազգի ներկայացուցիչների բարոյական, մտավոր և նյութական կարիքների բավարարումը, Հայաստանյայց եկեղեցու դավանությունն ու ավանդույթ-

---

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 7:

ները անադարտ պահելը, մանուկների՝ աղջիկ թե տղա, կրթության ապահովումը, հասույթներն օրինական կերպով հավաքելը և ծախսերն իմաստությամբ տնտեսելը, ազգի մեջ ծագած վեճերն արդարասիրությամբ խաղաղեցնելը և, վերջապես, ազգային առաջադիմությանը նպաստելը: Դ գլխի ամրագրմամբ ազգը փոխադարձաբար ներկայացնող և փոխադարձ պարտավորությունների կանոնավոր կատարումը ապահովելու համար կարգվում է իշխանություն՝ Ազգային վարչություն, Օսմանյան տերության հատուկ արտոնությամբ և Սահմանադրության միջոցով տնօրինում է թուրքահայության ներքին գործերը: Ե գլխի սկզբունքն արձանագրում է, որ Վարչությունն ազգային լինելու համար պետք է լինի երեսփոխանական: Եվ վերջապես Չ գլուխը ամրագրում է, որ երեսփոխանական Վարչության գործունեության հիմքը իրավունքի և պարտականության միասնության սկզբունքն է, որը և արդարության սկզբունքն է, իսկ օրինականության սկզբունքը բազմաց ձայնի մեջ է: Այժմ սահմանադրության բուն բովանդակության մասին:

Սահմանադրության Ա գլուխը՝ «Ազգային Կեդրոնական Վարչությունը», ամենաձավալունն է և ունի համեմատաբար բարդ կառուցվածք (1-84-րդ հոդվածներ): Գլխի Ա մասը վերաբերում է Կոստանդնուպոլսի Պատրիարքի ընտրությանն ու հրաժարականին: Սահմանադրության 1-ին հոդվածն ամրագրում է, որ «Կոստանդնուպոլսյ Պատրիարքը բոլոր Ազգային ժողովոյ Նախագահն է, և անոնց գործադիր իշխանութիւնը կը վարէ և մասնաւոր պարագաներու մէջ Տէրութեան հրամանաց գործադրութե միջնորդն է»: Ուստի Պատրիարք ընտվող անձը պետք է բավարարի որոշակի պայմաններ՝ վայելի ողջ ազգի վստահությունն ու հարգանքը, ունենա Պատրիարքական աթոռին վայել հատկություններ ու արժանիքներ, լինի եպիսկոպոսների դասից, գոնե իր հոր կողմից սկսած՝ օսմանական հպատակ և լրացած լինի 35 տարին: 2-րդ հոդվածը վերաբերում է Պատրիարքական աթոռը թափուր մնալու պատճառներին և ժամանակավոր տեղապահ ընտրելուն, իսկ այնուհետև ամենայն մանրամասնությամբ նկարագրվում է Ազգային ժողովի՝ Պատրիարք ընտրելու գործընթացին՝ թեկնածուների առաջադրմանը, քննարկմանը, քվեարկության կարգին, արդյունքների ամփոփմանը, արձանագրության կազմմանը և Կայսրի հաստատման ներկայացմանը: 4-րդ հոդվածը վերաբերում է Պատրիարք ընտրված անձի հրավերին, Մայր եկեղեցու մեջ Ընդհանուր


ժողովի առջև երդմանը՝ «Առաջի Աստուծոյ և ի ներկայութեան Ազգային ժողովոյս՝ հրապարակաւ ուխտեմ հաւատարիմ մնալ Տէրութեան և Ազգիս, և ճշմարտապէս հսկել Ազգային Սահմանադրութեան անթերի գործադրութեանը», Կայսրին ներկայանալուն և իր պաշտոնի ստանձնմանը: 5-րդ հոդվածը վերաբերում է Պատրիարքին ներկա իմաստով անվստահություն հայտնելու հիմքին. «Եթէ Պատրիարքը Սահմանադրութեան տրամադրութեանց հակառակ շարժի կամ վարուի, ամբաստանութեան տակ կընկնի»: Դրա իրավունքն ունեն միայն Ազգային ժողովը և կրոնական ու քաղաքական ժողովները: Այնուհետև 6-րդ և 7-րդ հոդվածներն ամենայն մանրամասնությամբ նկարագրում են այդ ամբաստանության կամ անվստահություն հայտնելու մեխանիզմը: 8-րդ հոդվածն ամրագրում է. «Պատրիարքին պարտաւորութիւնքն են Սահմանադրութեան սկզբանց համեմատ վարուիլ, և անոր ամեն կէտերուն ճշդիւ գործադրութեանը ուշի ուշով հսկել»: Սահմանադրության 8-12-րդ հոդվածները վերաբերում են Պատրիարքի իրավունքներին ու պարտականություններին: Դրանք իրականացնելու համար, ըստ 13-րդ հոդվածի, պատրիարքարանում պետք է ստեղծվի դիվանատուն, որը պետք է ունենա երեք գրասենյակ թղթակցության, արձանագրության և ազգահամարի: Այնուհետև, 13-16-րդ հոդվածներով սահմանվում են դրանց հիմնական գործառույթները: 17-23-րդ հոդվածները վերաբերում են Սուրբ Երուսաղեմի Պատրիարքի իրավասություններին ու պարտականություններին, Ազգային ժողովի կողմից նրա ընտրության ու ամբաստանության կարգին: 24-35-րդ հոդվածները Ազգային ժողովի կրոնական ժողովի մասին են: Ըստ 24-րդ հոդվածի՝ Կրոնական ժողովն ընտրովի է, բաղկացած 14 բանիբուն եկեղեցականներից, որոնց 35 տարին պետք է լրացած լինի և ձեռնադրված լինեն առնվազն 5 տարի առաջ: Այնուհետև տրվում է այդ ժողովի երկու տարին մեկ անդամների ընտրության կարգը՝ թեկնածուների առաջադրում, քննարկում, քվեարկություն, հաստատում, հրաժարական տված անդամների ազատ տեղերի լրացում: Սրան հետևում է ժողովի պարտավորությունների ու իրավասությունների սահմանումը : Նրա իրավասությունների մեջ են կրոնական գործերը, կրթությունը, կրոնական վեճերի լուծումը: Սահմանադրության 36-43 –րդ հոդվածները վերաբերում են Քաղաքական ժողովին: 36-րդ հոդվածը նշում է, որ «Քաղաքական ժողովը կը բաղկանայ

Ազգային գործոց և Տերութեան օրինաց տեղեակ քսան աշխարհականներէ»: Այդուհետ նկարագրվում է Քաղաքական ժողովի անդամների առաջադրման, ընտրության, հաստատման կարգը: Ժողովի անդամները վերընտրվում են երկու տարին մեկ: Քաղաքական ժողովի պարտականություններն են՝ ազգի բարեկարգությանն ու առաջադիմությանը նպաստելը, դրա ուղղությամբ ջանք ու եռանդ գործադրելը, իր տեսչության ենթակա խորհրդի մատուցած ազգօգուտ առաջարկությունների քննությունը, ինչպես նաև դրանց կարևորությունն ընդունելուց հետո հաստատել դրանք կամ ջանք գործադրել դրանց իրագործման արգելքները հաղթահարելու համար: 43-րդ հոդվածի համաձայն, եթե իրեն ուղղված քաղաքացիական գործերի լուծումը վեր է իր ուժերից, ապա Քաղաքացիական ժողովը դիմում է Ընդհանուր ժողովին: Ըստ 44-րդ հոդվածի՝ Քաղաքական ժողովը կազմում է ազգային և հոգաբարձության խորհուրդներ: Ազգային խորհուրդները չորսն են՝ ուսումնական, տնտեսական, դատաստանական, վանքերի, իսկ հոգաբարձության խորհուրդները՝ էլևմտից, կտակաց, հիվանդանոցի: Այդ խորհրդի անդամները պաշտոնավարում են երկու տարի՝ պայմանով, որ տարեգլխին նրանց անդամների կեսը պետք է նորացվի: Դատաստանական խորհրդի նախագահը Կ. Պոլսի Պատրիարքի փոխանորդն է: 45-51-րդ հոդվածները վերաբերում են այդ խորհուրդների քանակին, անդամների ընտրությանը, հիմնական գործառույթներին, լիազորություններին, իրավասություններին ու պարտականություններին, այն հիմնական խնդիրներին, որոնք նրանք պարտավոր են լուծել: Թաղական խորհուրդներին վերաբերող 52-56-րդ հոդվածները սահմանում են նրա կազմը՝ 5-12 անդամ՝ չորս տարի ժամկետով, ընտրության կարգը, գործունեության ուղղությունները, իրավունքն ու պարտականությունները: 57-րդ հոդվածը Ազգային ընդհանուր ժողովի կազմությունը, կառուցվածքը, իրավունքներն ու պարտականություններն է ամրագրում: Ըստ այդմ՝ Ազգային ժողովը բաղկացած է 140 երեսփոխանից հետևյալ համամասնությամբ՝ մեկ յոթերորդ մասը՝ 20-ը, եկեղեցական երեսփոխաններն են, որոնց ընտրում են Կոստանդնուպոլսում ապրող եկեղեցականները, երկու յոթերորդ մասը՝ 40-ը, գավառից ընտրվածներն են, իսկ չորս յոթերորդ մասը՝ 80-ը, Կոստանդնուպոլսի թաղերից ընտրված երեսփոխաններն են: 58-62-րդ հոդվածներով սահ-

մանվում է Ազգային ընդհանուր ժողովի աշխատանքների կազմակերպման ներքին կանոնակարգը: 63-64-րդ հոդվածները վերաբերում են եկեղեցական երեսփոխանների ընտրությանը: Ընտրվողը պետք է որևէ այլ պաշտոն չունենա, երեսուն տարին լրացած լինի, ձեռնադրված լինի առնվազն հինգ տարի առաջ և որևէ դատաստանի տակ չլինի: Եկեղեցական երեսփոխանի պաշտոնը տասը տարի ժամկետով է, իսկ երկու տարին մեկ նրանց մեկ հինգերորդը պետք է նորացվի: 65-68-րդ հոդվածներով ամրագրվում է աշխարհականներից երեսփոխանների ընտրության կարգը: Երեսփոխան ընտրելու համար պահանջվում են որոշակի տուրքային ցենզ և անձնական արժանիք: Նա պետք է զբաղեցրած լինի որևէ պաշտոն, լինի բժիշկ, ուսուցիչ, գրող կամ ազգին օգտակար ծառայություններ մատուցած անձ: Ընտրելու իրավունք ունեն Օսմանյան տերության հպատակ քսանհինգ տարին լրացած անձինք: Ընտրելու իրավունքից զրկված են հետևյալ չորս դասի անձինք՝ քրեական հանցագործները, դատարանի կողմից դատապարտված անձինք, որոնց պատժաժամկետը չի լրացել, ազգային գործերի մատակարարության մեջ խարդախության մեջ բռնվածները, որոնք դատապարտվել են Ազգային ժողովներից որևէ մեկի կողմից, ինչպես նաև խելագարությամբ տառապող անբուժելի հոգեկան հիվանդները: Ընտրվելու իրավունք ունեն ազգի հայտնի անհատները, որոնք օսմանահպատակ են, լրացել է նրանց երեսուն տարին, լավատեղյակ են տերության օրենքներին, հմուտ են ազգային գործերում և զրկված չեն ընտրական իրավունքից: 69-71-րդ հոդվածները վերաբերում են ընտրության եղանակին՝ Կոստանդնուպոլսի թաղերից ու գավառներից ընտրվելիք երեսփոխանների տեղերի բաշխման ցուցակները կազմելուն, ընտրողական ժողովների, ընտրացուցակները կազմելուն ու ընտրություններից ութ օր առաջ ծանուցմանը, ըստ դրանց թվի երեսփոխանների տեղերի հատկացմանն ու թեկնածուների ցուցակների հրապարակմանը, որն Ազգային ընդհանուր ժողովի ողջ լիազորությունների շրջանում կարող է փոխվել ըստ բնակչության թվի փոփոխության: Սահմանադրության 72-89-րդ հոդվածները վերաբերում են բուն քվեարկության գործընթացին: Այն սկսվում է կիրակի օրը՝ առավոտյան ժամերգությունից հետո, և ավարտվում այդ նույն օրը: Քվեարկությունը փակ, գաղտնի է: 75-րդ հոդվածով արգելվում է նույն անձին երկու տեղ քվեարկելը: 77-րդ



հողվածով սահմանվում են քվեաթերթիկը ճիշտ լրացնելու ձևը, քվեարկության կարգը, քվեաթերթիկները հաշվելը հատուկ քննիչների կողմից, արդյունքները ամփոփելը, արձանագրությունը կազմելը: Եթե պարզվի, որ տարբերություն կա քվեատուփում առկա քվեաթերթիկների և քվեարկությանը մասնակցածների թվի միջև, և թաղական խորհուրդը խարդախության կասկածներ կունենա, ապա առաջիկա կիրակի օրը նշանակվում է նոր քվեարկություն: Եթե քվեարկության առաջին փուլում երեսփոխանների թիվը չի լրացվում, ապա մնացածի համար մյուս օրը՝ երկրորդ անգամ, տեղի է ունենում քվեարկություն: 78-րդ հոդվածն անդրադարձնում է անվավեր քվեաթերթիկներին: 79-րդ հոդվածը նշում է, որ եթե երկու թեկնածու ստացել են հավասար թվով քվե, ապա ընտրված է համարվում նրանցից երեցագույնը: Ըստ 80-րդ հոդվածի, եթե ոչ մի թեկնածու չի ստացել քվեարկածների թվի կեսից ավելի ձայներ, ապա երկու առավելագույն ձայներ ստացածների միջև տեղի է ունենում կրկնական քվեարկություն: 81-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր թաղական խորհուրդ ընտրված երեսփոխանի անունը, տվյալները, քվեարկության վերաբերյալ բոլոր պարագաները տեղեկագրով ներկայացնում է Պատրիարքին, որն էլ ներկայացնում է Քաղաքական ժողով: Քաղաքական ժողովը ստուգում է ընտրության օրինականության բոլոր հանգամանքները և կազմում տեղեկանք, որը ներկայացնում են Ընդհանուր ժողովի առաջին նիստի հաստատմանը (82-րդ հոդված): Ընդհանուր ժողովն իր առաջին նիստը կարող է գումարել, եթե ընտրվել է երեսփոխանների ընդհանուր թվի կեսից ավելին՝ 71 հոգի: Ըստ Ա գլխի՝ Ազգային ժողովն ուներ հետևյալ կառուցվածքը.



Սահմանադրության Բ գլուխը բաղկացած է հինգ հոդվածից /85-89/ և վերնագրված է «Ընդհանուր կանոնք ժողովոյ և խորհրդոյ», որը, ըստ էության, ժողովների և խորհուրդների կանոնադրությունն է: 85-րդ հոդվածն արձանագրում է, որ «Ամեն ժողով և խորհուրդ պիտի ունենայ ատենական Դիւան մը, որ կը բաղկանայ մէկ Ատենապետէ, մէկ Ատենադպրէ, և երբեմն նաև Ատենապետի և Ատենադպրի Փոխանորդներէ»: Սրանք բոլորը պարտադիր պետք է լինեն ժողովի անդամներ: Ատենական Դիւանը տարին մէկ պետք է նորացվի ընտրության միջոցով: Ըստ 86-րդ հոդվածի պահանջի՝ առանց մեծամասնության ներկայության Ատյան չի կարող կազմվել: 87-րդ և 88-րդ հոդվածները քննարկված հարցի մասին որոշման ընդունման կարգին են վերաբերում՝ քվեարկությամբ և ձայների մեծամասնությամբ: 89-րդ հոդվածը պահանջում է, որ Ընդհանուր ժողովի գումարումից վեց օր առաջ Պատրիարքարանը պետք է հրավիրագրեր ուղարկի ժողովի բոլոր անդամներին:

Սահմանադրության Գ գլուխը (90-93-րդ հոդվածներ) ազգային տուրքի մասին է: 90-րդ հոդվածը նշում է, որ ամեն ազգային անհատ, որը չափահաս է, ունի վաստակ ու շահու տեր է, պարտավոր է մասնակցել ազգային ծախսերին: Այդ տուրքը «տարեկան է, և բաշխման հիմն կը բռնուի իւրաքանչիւր անհատի կարողութիւն»: Ազգային տուրքը, համաձայն 91-րդ հոդվածի, երկու տեսակ է. մէկն ընդհանուր ծախսերի հատկացման համար է, որը հավաքում է Պատրիարքը (փոխանցվում է կենտրոնական սնդուկ), իսկ մյուսը մասնավոր է՝ յուրաքանչյուր թաղի մասնավոր ծախսերի համար, որը հավաքում է թաղային խորհուրդը (փոխանցվում է թաղային սնդուկ): Ըստ 92-րդ հոդվածի՝ Կոստանդնուպոլսի մեջ ընդհանուր տուրքի բաշխման ու հավաքման եղանակը որոշում է Քաղաքական ժողովը, որը հաստատում է Ընդհանուր ժողովը, իսկ մասնավոր տուրքը՝ ամեն թաղ իր խորհրդում է որոշում և հաստատում: Այդ սկզբունքով են նաև գավառների մեջ որոշվում և տնօրինվում գավառների ընդհանուր տուրքն ու թաղական մասնավոր տուրքը:

Սահմանադրության Դ գլուխը՝ «Ազգային գաւառական վարչութիւն», բաղկացած է հինգ հոդվածից ( 94-98): Գլխի 94-րդ հոդվածն ամրագրում է, որ Առաջնորդը Գավառական ժողովի նախագահն է և վարում է գործադիր իշխանությունը: Նրա հիմնական պարտականությունն է «գաւառին

մէջ Ազգային Սահմանադրութեան գործադրութեանը հսկելը»: 95-րդ հոդվածը նվիրված է գավառի Առաջնորդի բնակության վայրին, Առաջնորդի և Վանահոր պաշտոնների համատեղման հնարավորությանը և պայմաններին: Ըստ 96-րդ հոդվածի՝ գավառները Կոստանդնուպոլսի նման բաժանվում են թաղերի. յուրաքանչյուր թաղ պետք է ունենա իր թաղական խորհուրդը, թաղական «սնտուկը» և թաղական դիվանատունը: Առաջնորդանիստ քաղաքում պետք է հաստատվեն Կրոնական և Քաղաքական ժողովներ: Քաղաքական ժողովի տնօրինության տակ պետք է գոյություն ունենա «գավառական սնտուկ», այսինքն՝ բյուջեն: Առաջնորդարանի մէջ պետք է հաստատվի նաև գավառական դիվանատուն: 97-րդ հոդվածը նկարագրում է Առաջնորդի ընտրության կարգը, որը, ըստ էության, նույնն է և նման Պատրիարքի ընտրությանը: 98-րդ հոդվածը նշում է, որ Գավառական ժողովները կազմվում են Կենտրոնական վարչության ժողովների հանգույն, որտեղ պաշտոններն ու պարտականությունները նույնն են և իրար նման: Տարբերությունն այստեղ այն է, որ Գավառական ժողովների անդամների թիվը կարող է տարբեր լինել, քանզի այն պետք է որոշվի ըստ գավառի բնակչության թվի: Այս հոդվածով սահմանվում է նաև, որ Գավառական ընդհանուր ժողովի անդամ կարող է ընտրվել միայն այն անձը, որը վճարում է առաջին, երկրորդ և երրորդ աստիճանի տուրք, այսինքն՝ ընտրվելու իրավունքը կապվում է որոշակի ցենզի՝ տուրքի բոլոր աստիճանների վճարունակության հետ: Գավառական ժողովների կազմության կարգը, ըստ գավառի բնակչության թվի, որոշում է Կենտրոնական վարչությունը՝ խորհրդակցելով Առաջնորդների հետ:

Սահմանադրության Ե գլուխը՝ «Վերաքննութիին սահմանադրութեան» (99-րդ հոդված), վերաբերում է սահմանադրության փոփոխությանը: Ըստ այդմ՝ սահմանադրության հիմնական սկզբունքները անփոփոխելի են: Սակայն երբ «փորձառութեամբ՝ ի՛նչ ի՛նչ տրամադրութեանց» փոփոխության անհրաժեշտություն առաջանա, ապա դա կարելի է անել սահմանադրությունն ընդունելուց միայն հինգ տարի անց: Նման դեպքում կազմվում է «Վերաքննութեան Հանձնաժողով», որում ընդգրկվում են «Կրօնական և Քաղաքական Ժողովներէն երեքական անդամ, չորս Տեսուչ, Խորհուրդներէն երկու անդամ, և ասոցմէ գատ Ընդհանուր Ժողովոյ մէջէն կամ դրսէն վեց հոգի, ընդ ամենը քսան անդամ ընտրելով»: Այս հանձնաժողովը կնախապատրաստի Սահմանադրության փոփոխությունների նախա-

գիծը, կներկայացնի Ընդհանուր ժողովի վավերացմանը, որից հետո կներկայացվի Բարձրագույն Դրան, «և Կայսերական հրամանին համեմատ կը գործադրուին»:

Արևմտահայ կյանքում և մասնավորապես Թուրքիայում Ազգային սահմանադրությունը նոր երևույթ էր, թեև ավելի կանոնադրություն էր, քան սահմանադրություն: Սուլթանական իրավակարգի պայմաններում իսկական սահմանադրություն չէր էլ կարող լինել:

Անտարակույս, տևական ջանքերով ձեռք բերված սահմանադրություն-կանոնադրությունը չէր ապահովելու «Ազատություն, եղբայրություն, հավասարություն»-ը: Թուրքիան հեռու էր հանրային օրինավորության պահպանումից, մանավանդ այլադավան հայերի համար: Այնպես որ գերլավատեսորեն տրամադրված մոլորյալներն ականա վնասում էին հայոց ազգային ինքնագիտակցության զարթոնքին ու ինքնակազմակերպման ամրապնդմանը: Որքան էլ խոսվեր միասնական «օսմանականության» մասին, որքան էլ որոշ հայեր հավատային «բարեխնամ» Կառավարության մարդասիրությանը, մի բան աներկբա է, որ Թուրքիայի ղեկավարությունը որդեգրել էր մի քաղաքականություն՝ «Թուրքիան՝ թուրքերի համար», որ տարիներ անց ցեղասպանության հիմնական պատճառ էր դառնալու: Թուրքերը, որպես եկվոր տարր, վաղ թե ուշ փորձելու էին ազատվել իրենց զավթած տարածքի բնիկ տերերից, և հայերի հետ «սիրախաղը» լուրջ շղարշ էր՝ հանդես գալու եվրոպական հանրության առջև:

Միևնույն ժամանակ, չի կարելի ժխտել, որ սահմանադրության շնորհիվ հայ համայնքը նոր հնարավորություն էր ստանում օրինական ճանապարհով ընդլայնելու սեփական իրավունքներն ու ազատությունները: Խնդիրը, այսպիսով, երկակի է եղել, առաջին՝ սթափ գնահատել հանրային կառավարման այս լծակը, երկրորդ՝ դրան տալ առավելագույնս բարենպաստ գործադրում: Սահմանադրության ընդունմամբ տեղի ունեցավ հայության կարգավիճակի արմատական փոփոխություն: Օտար պետական կառույցի շրջանակներում հայերը սկսեցին գործել ոչ թե սուկ որպես եկեղեցական-կրոնական համայնք, այլ օրենսդրական սկզբունքներով գործող ազգային հավաքական միավոր: «Հիմնական սկզբունքների» հատվածում այդ կերպ էլ բնորոշվում են ազգի և նրա անդամների փո-

խաղարձ իրավունքներն ու պարտականությունները: Սահմանադրությունը ճշտորոշեց հայության ինքնակառավարման համակարգը, դրա կառուցվածքը, կենտրոնական ու տեղական կառույցների փոխհարաբերությունները, կառավարման մարմինների ընտրության և հաշվետվության կարգը: Բայց առավել էական է, որ ամբողջ համակարգը գործում էր միապետական Թուրքիային միանգամայն խորթ ժողովրդավարական սկզբունքներով, որը դեռ սահմանադրություն չունեւ: Թուրքիայի առաջին սահմանադրությունն ընդունվել է 1876 թվականին, չեղյալ հայտարարվել 1878-ին և վերականգնվել 1908-ին: Հայոց սահմանադրությամբ թեև Պոլսո պատրիարքը պահպանել էր որոշ արտոնություններ, սակայն նախկին վիճակի համեմատ՝ դա գրեթե ներկայացուցչական դերակատարում ուներ, այնպես որ, փաստացի՝ հայությունն ընտրել էր խորհրդարանական կառավարման ձևը, ինքնակառավարման բոլոր մարմիններն ընտրովի էին և գործում էին օրինավորության սահմաններում: Ի դեպ, Պատրիարքի պաշտոնն այդ համակարգում ատավիզմ է, հնից ժառանգված մնացուկ, որը պահպանվել է գուև Օսմանյան կայսրության պահանջով: Հավելենք, որ «պատրիարքություն» հաստատությունն ինքնին խորթ է Հայոց եկեղեցու նվիրապետությանը, մի արհեստաձին մարմին է, որը Բյուզանդական կայսրության ուղղափառ եկեղեցու համաբանությամբ հիմնել է սուլթան Մահմեդ II Ֆաթիհը 1461 թվականին՝ Էջմիածնի կաթողիկոսությունից թուրքահայությանը կտրելու նպատակով:

Իր տեսական արժեքով ու գործնական վիթխարի նշանակությամբ հանդերձ՝ Հայոց սահմանադրությունն այնուամենայնիվ չգործառնվեց լիարժեք կերպով, քանզի ունեցավ մի շարք խոչընդոտող օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ: Այդ խոչընդոտներից էր նախ այն, որ սուկ օրենքների հռչակմամբ օրինականություն չի ապահովվում, եթե պետությունը չի կատարում այդ օրինականության երաշխավորի իր պարտականությունները: Դրանով իսկ նա ինքն է անբարոյականացնում հասարակությունը, քաղաքացիներին դրդում ապօրինի գործողությունների: Քաղաքացիներից բարոյականություն և օրինավորություն պահանջող պետությունը ինքը պետք է օրինավորության օրինակ լինի, որ բարոյական իրավունք ունենա այդ նույնը պահանջելու իր հպատակ քաղաքացիներից: Այդ առումով պետք է ասել, որ Թուրքիան, որոշ նկատառումներից

ելնելով, թեև վավերացրեց Հայոց սահմանադրությունը, բայց բացարձակապես շահագրգռված չէր նրա լիարժեք գործադրմամբ: Մյուս կողմից հարցն այն է, թե հանրության առաջնորդները, մտավորականությունը, քաղաքական և մշակութային վերնախավը ինչպես են կարողանում գործադրել այդ ձգտումը, որպեսզի սահմանադրական հայ ազգը, որը միշտ եղել է ու կա արդարություն, օրինականություն պահանջող, դառնա նաև օրինականությանը ենթարկվող ու կատարող, այսինքն՝ օրինապահ ազգ: Դրա առաջին և գլխավոր պայմանը ազգային միասնությունն է, որը ցավոք միշտ բացակայել է ու ուղեկցել հայ ժողովրդին սկսած Խորենացու «Ողբից»: Սահմանադրությունն ու դրա ընդունումը սկզբնական շրջանում ազգի միավորման դեր կատարեցին, քանզի այն հետապնդում էր վերկուսակցական և համազգային նպատակ: Սահմանադրության ընդունումից հետո սկսվեցին հակառակություններն ու երկպառակությունները՝ խարխուլելով այդ միասնությունը: Թուրքահայության երկփեղկվածությունը մասամբ անխուսափելի արտացոլումն էր համապատասխան սոցիալ-տնտեսական իրողության, մասամբ էլ միտումնավոր թելադրում էր թուրքական կառավարությունը: Սրա հետևանքով սահմանադրության գործադրման ընթացքում առաջ եկան անցանկալի բախումներ, գժտություններ, փոխադարձ մեղադրանքներ: Խոչընդոտող հանգամանքներից էր անհատական և հանրային շահերի հաշտեցման, սեփական իսկ օրենքների կամովին ենթարկվելու անկարողությունը: Արմատական սխալներից էր նաև սահմանադրության կարգավորման տիրույթից կաթոլիկ հայերին դուրս թողնելը, որը ազգի տարանջատման արդեն իսկ արհեստական պատճառ էր: Թեև սահմանադրությունն ամրագրում էր ապակենտրոնացման սկզբունքը, սակայն գավառային հայությունը վատ էր ներկայացված օրենսդիր մարմնում՝ Ազգային ժողովում: Լուրջ հակասություններ առաջացան Երուսաղեմի միաբանության, Աղթամարի և Կիլիկիայի կաթողիկոսությունների միջև, որոնց որոշ դեպքերում միջամտեց թուրքական կառավարությունը: Եթե այս ամենին հավելենք նաև Ազգային ժողովի ու գործադիր մարմինների, կենտրոնական ու տեղական կառույցների միջև և հենց բուն այդ մարմինների ներսում անձնական հողի վրա ծագած բազմազան մանր-մունր հարցերը, ապա այս խորապատկերում արդեն անհնար էր ապահովել ազգային միասնությունը և հայ համայնքի ներքին կյանքի ներդաշնակ կար-

գավորումը: Չնայած զգալի թերություններին՝ Ազգային սահմանադրությունը նոր և առաջադեմ երևույթ էր արևմտահայ կյանքում: Նպատակն էր ավելի ժողովրդավար հիմքերի վրա դնել Կ. Պոլսի պատրիարքարանի գործունեությունը, կարգավորել Օսմանյան պետության և արևմտահայության փոխհարաբերությունները: Ազգային սահմանադրության գործադրման ամենաբեղուն շրջանը 1870-90-ական թվականներն էին, մասնավորապես Մկրտիչ Խրիմյանի (1869-73) և նրան հաջորդած Ներսես արքեպիսկոպոս Վարժապետյանի (1874-1884) պատրիարքության տարիները, երբ Ազգային ընդհանուր ժողովը բազմիցս քննարկել է գավառահայության հարստահարությունները սանձահարելու որոշումները, ընտրել հայկական բարեփոխումների ծրագրեր և այլն: Ինչպես նշվեց, Օսմանյան կառավարությունն ամեն կերպ խոչընդոտել է Ազգային սահմանադրության կիրառմանը, իսկ 1896-ին Աբդուլ Համիդ II-ը նույնիսկ արգելել է այն: 1908-ին, կրկին արտոնվելով, Ազգային սահմանադրությունը գործել է մինչև Առաջին աշխարհամարտը (1914-1918), երբ Կ. Պոլսի ազգային մարմինների անդամների մեծագույն մասը դարձավ Մեծ եղեռնի զոհ: 1916 թ. օգոստոսի 10-ին երիտթուրքերի կառավարությունը «Նոր կանոնադրություն հայոց պատրիարքության վերաբերյալ» օրենքով էական սահմանափակումների ենթարկեցին Ազգային սահմանադրությունը, որի գործունեությունը վերջնականապես կասեցվեց հանրապետական Թուրքիայում (թեև որոշ դրույթներ ներկայումս դեռ կիրառվում են): Այնուամենայնիվ, Ազգային սահմանադրությունը զգալի հետք է թողել սփյուռքահայ իրականության մեջ: Նրա հիմնական սկզբունքներն ընկած են ժամանակակից սփյուռքի շատ համայնքների կանոնադրությունների հիմքում (ԱՄՆ, Բուլղարիա, Եգիպտոս, Լիբանան, Հունաստան, Ռումինիա, Սիրիա և այլն): Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության 1992-ին ընդունված կանոնադրության մեջ ուղղակիորեն նշված է, որ վերջինիս հիմքը Ազգային սահմանադրությունն է՝ «իր ոգով և էական սկզբունքներով»<sup>12</sup>:

Հետահայաց դիտարկմամբ Ազգային սահմանադրությունը, անշուշտ, դրական դեր է խաղացել թուրքահայոց կյանքում: Հայության առաջադիմական տարրերի համառ և հետևողական պայքարի շնորհիվ Օսմանյան

<sup>12</sup> Տե՛ս Քրիստոնյա Հայաստան, Երևան, 2002, էջ 21:



կայսրության հպատակ ազգերից մեկին հաջողվեց Կառավարության առջև որոշակի իրավական պահանջներ դնել, մեծապետական ապօրինությունների առջև իրավական սահմաններ քաշել, հանդես գալ, ժամանակակից լեզվով ասած՝ որպես հանրային կառավարման հավաքական սուբյեկտ: Իրավակիրառ առումով մեծ չափազանցություն չի լինի, եթե ասենք, որ Ազգային սահմանադրությամբ թուրքահայությունը պետություն հիշեցնող որոշակի հատկանիշներ էր ձեռք բերում: Իսկ իրադարձությունների հետագա ընթացքը, հասկանալի է, պայմանավորված էր բազում գործոններով, և սխալ կլիներ իրական կյանքի վրա ազդեցության առումով տվյալ փաստաթղթի նշանակության ինչպես գերազնահատումը, այնպես էլ թերազնահատումը: Սահմանադրությունը միգուցե ավելի արժեքավոր է տեսական ըմբռնումների առումով: Այսինքն, թե որքան արդիական լուծումներ են տվել, որքան համահունչ են դրանք այսօրվա կառավարչական մտքին, և ուրեմն որքան անհրաժեշտ է դրանց իմացությունը պետականակերտման, պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման ներկայիս խնդիրների ըմբռնման, մասնավորապես համամարդկային ընդօրինակելի փորձը սեփական ազգամշակութային հենքով գործադրելու համար: Այս սահմանադրությունը գալիս է մեկ անգամ ևս ապացուցելու, որ սահմանադրական հայ ազգը եթե լինեք միասնական ու միասնական, իրավակիրառ պրակտիկայում նույնքան օրինապահ ու օրինավոր, որքան հզոր էր իրավաստեղծ տեսության մեջ, ապա արժանի կլինեք ավելի լավ ու երջանիկ կյանքի, կարող էր դասվել աշխարհի մեծագույն ազգերի թվին՝ ունենալով մեծ և հզոր պետություն:

## НАЦИОНАЛЬНАЯ КОНСТИТУЦИЯ

ГРИГОР ТАНАНЯН

### Резюме

Национальная конституция являлась сводом канонов, относящихся к внутренней жизни западных армян. Она была принята Национальным собранием Константинополя 24 мая 1860 года, а 17 марта 1863 года.

Для ведения внутренних дел западных армян были сформированы Национальное собрание (законодательный орган), Национальное

центральное управление (исполнительный орган). В жизни западных армян, в частности в Турции, Национальная конституция была новым явлением, хотя она была скорее сводом канонов, чем конституцией. В условиях султанского правопорядка настоящей конституции не могло и быть. Эта конституция не предполагала какой-либо серьезной гарантии ни общих прав армянской нации, ни личных прав отдельных ее членов, а также, как выяснилось впоследствии, права на жизнь и существование. Несмотря на недостатки, Национальная конституция была исторически примечательным явлением. Её существование в Турции продолжалось недолго. Она с незначительными изменениями действовала до 1896 года, была запрещена указом Абдул Гаида II, затем её действие вновь было восстановлено в 1908 году, а в 1915 году она окончательно перестала действовать.

## NATIONAL CONSTITUTION

GRIGOR TANANYAN

### Summary

The national constitution was the statute related to the inner life of the Western Armenians. It was adopted on May 24, 1860 by the National Assembly of Konstandnupolis and on March 17, 1863 it was .National Assembly (legislative body,) National Central Administration (executive body,) National Central Assembly (spiritual affairs) and Political Assembly (secular affairs) were set up for conducting the inner affairs of Western Armenians. In Western life, particular in Turkey the national constitution was a new phenomenon, though it was more statute than a constitution. There could not be a real constitution under the conditions of sultan law and order. That constitution did not contain any serious guarantee for either collective or personal rights of separate persons and as it was found out later there was no guarantee for the life and existence of the Armenian nation. Even with its shortcomings the national constitution was a remarkable historical phenomenon. Its existence was very short lived in Turkey. With very tiny amendments it was processed till 1896 then was forbidden by the order of Abdul Hamid II, then again was patented in 1908, and finally abolished in 1915.